ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/112

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.07.2018թ. թիվ 03/26-3/13112-18 գրությամբ «Սլայդ Արտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 16.07.2018թ. թիվ 01/61-16285 գրության հիման վրա, 18.07.2018թ. թիվ 03/26-3/13112-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Սլայդ Արտ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Սլայդ Արտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկաացվել:

«Սլայդ Արտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/112 ընթացակարգի շրջանակներում 20.07.2018թ. ժամը 11:10-ին և 23.07.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.07.2018թ. թիվ 01/61-16285 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի միջև 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» ծածկագրով գնման պայմանագիրը 17-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ չափաբաժինների մասով, 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» ծածկագրով գնման պայմանագիրը և 05.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» ծածկագրով գնման պայմանագիրը 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ չափաբաժինների մասով 13.07.2018թ. դրությամբ միակողմանի լուծվել է («ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» ծածկագրերով գնման պայմանագրերը լուծվել են մասնակի)՝ հիմք ընդունելով Ընկերության 09.07.2018թ. թիվ 01 գրությունը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/112 ընթացակարգի շրջանակներում 20.07.2018թ. ժամը 11:10-ին և 23.07.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2018/112 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2018/112 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի միջև 05.02.2018թ. և 12.02.2018թ. կնքվել են համապատասխանաբար «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2», «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» և «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» ծածկագրերով գնման պայմանագրերը, որոնց համաձայն Ընկերությունը պարտավորվել է Երևանի քաղաքապետարանին մատուցել համապատասխան ծառայություններ:

2. Պատվիրատուին ուղղված 09.07.2018թ. թիվ 01 գրությամբ «Սլայդ Արտ» ՍՊԸ-ն հայտնել է, որ տեխնիկական խնդիրներով պայմանավորված Ընկերությունը հրաժարվում է կատարել Երևանի քաղաքապետարանի և «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի միջև (Ավան վարչական շրջանի մասով) 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» ծառայությունների մատուցման պայմանագրի 17-րդ, 19-րդ, 22-րդ և 23-րդ չափաբաժիններով նախատեսված միջոցառումները, 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված միջոցառումը և 05.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագրի 10-րդ, 12-16-րդ չափաբաժիններով նախատեսված միջոցառումները:

3. Երևանի քաղաքապետարանն Ընկերությանն ուղղված 13.07.2018թ. թիվ 61/819 գրությամբ միակողմանի լուծել է Երևանի քաղաքապետարանի և «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի միջև 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1», 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» և 05.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» ծածկագրերով գնման պայմանագրերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.07.2018թ. թիվ 03/26-3/13112-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 16.07.2018թ. թիվ 01/61-16285 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի

(պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 405-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի միջև 05.02.2018թ. և 12.02.2018թ. կնքվել են համապատասխանաբար «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2», «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» և «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» ծածկագրերով գնման պայմանագրերը, որոնց համաձայն Ընկերությունը պարտավորվել է Երևանի քաղաքապետարանին մատուցել համապատասխան ծառայություններ:

Մասնավորապես՝ 05.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» ծածկագրով պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն (Երևանի քաղաքապետարան) հանձնարարարում է, իսկ Կատարողը («Սլայդ Արտ» ՍՊԸ) ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Սլայդ Արտ» ՍՊԸ-ն պարտավորվել է Երևանի քաղաքապետարանին մատուցել 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ չափաբաժիններով նախատեսված ծառայությունները:

Համաձայն կողմերի միջև 07.03.2018թ. կնքված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունների հանձնման-ընդունման թիվ 06 արձանագրության՝ Ընկերության կողմից պայմանագրի շրջանակներում Պատվիրատուին մատուցվել է 11-րդ չափաբաժնով նախատեսված ծառայությունը:

Երևանի քաղաքապետարանի և «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի միջև 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» ծածկագրով գնման պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն (Երևանի քաղաքապետարան) հանձնարարարում է, իսկ Կատարողը («Սլայդ Արտ» ՍՊԸ) ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Սլայդ Արտ» ՍՊԸ-ն պարտավորվել է Երևանի քաղաքապետարանին մատուցել ամանորյա ձևավորման ծառայություններ:

Երևանի քաղաքապետարանի և «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի միջև 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» ծածկագրով պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն (Երևանի քաղաքապետարան) հանձնարարարում է, իսկ Կատարողը («Սլայդ Արտ» ՍՊԸ) ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Սլայդ Արտ» ՍՊԸ-ն պարտավորվել է Երևանի քաղաքապետարանին մատուցել 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 15-17-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ չափաբաժիններով նախատեսված ծառայությունները:

Կողմերի միջև պայմանագրի շրջանակներում 12.02.2018թ., 19.02.2018թ., 01.03.2018թ., 27.03.2018թ., 07.04.2018թ., 25.05.2018թ., 01.06.2018թ. կնքված համապատասխանաբար թիվ 03, 04, 05, 07, 09, 12 և 13 հանձնման-ընդունման արձանագրությունների համաձայն՝ Ընկերության կողմից Երևանի քաղաքապետարանին մատուցվել են պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 15-րդ և 16-րդ չափաբաժիններով նախատեսված ծառայությունները:

Պատվիրատուին ուղղված 09.07.2018թ. թիվ 01 գրությամբ «Սլայդ Արտ» ՍՊԸ-ն հայտնել է, որ տեխնիկական խնդիրներով պայմանավորված Ընկերությունը հրաժարվում է կատարել Երևանի քաղաքապետարանի և «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի միջև (Ավան վարչական շրջանի մասով) 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» ծառայությունների մատուցման պայմանագրի 17-րդ, 19-րդ, 22-րդ և 23-րդ չափաբաժիններով նախատեսված միջոցառումները, 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված միջոցառումը և 05.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագրի 10-րդ, 12-16-րդ չափաբաժիններով նախատեսված միջոցառումները:

Երևանի քաղաքապետարանը Ընկերությանն ուղղված 13.07.2018թ. թիվ 61/819 գրությամբ միակողմանի լուծել է Երևանի քաղաքապետարանի և «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի միջև 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1», 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» և 05.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» գնման պայմանագրերը:.

Այսպես պայմանագրերի 2.1.3 կետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա)մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Տվյալ դեպքում գտնում եմ, որ «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի կողմից խախտվել են Ընկերության և Երևանի քաղաքապետարանի միջև 05.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2», 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1», 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» ծածկագրերով գնման պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, քանի որ Ընկերությունը 05.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» և 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» գնման պայմանագրերով նախատեսված ծառայությունները մատուցել է մասնակի, իսկ 12.02.2018թ. թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» ծածկագրով պայմանագիրը

ընդհանրապես չի կատարվել Ընկերության կողմից: Ընկերությունը Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է 05.02.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» և 12.02.2018թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» ծածկագրերով գնման պայմանագրերով նախատեսված մնացած ծառայությունները և 12.02.2018թ. թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» գնման պայմանագրով նախատեսված ծառայությունը մատուցելուց, որի հետևանքով Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել են վերոհիշյալ պայմանագրերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.07.2018թ. թիվ 03/26-3/13112-18 գրությամբ «Սլայդ Արտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00930748) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սլայդ Արտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**